ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՆՈՐ ՏԱՐԻ - ԱՄԱՆՈՐ ՏՈՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(1920 -1950 -ական թթ.)

Սամվել Մկրտչյան

Նոր տարին կամ Ամանորը թերևս միակն էր ավանդական տոներից, որ համեմատաբար քիչ հալածվեց բոլշևիկյան իշխանությունների կողմից: Այն եզակի տոներից էր, որ առաջին իսկ դեկրետով մուտք գործեց հայոց խորհրդային պետական տոնացույց[1]: Դա յուրատեսակ «կոմպրոմիս» էր, քանի որ նախ՝ Նոր տարին սիրված և տարածված էր կենցաղում (որի հետ պետական շրջանակները ստիպված էին հաշվի նստել) և, որ այդ տոնի աշխարհիկ հատկանիշներն անհամեմատ գերակշռում էին կրոնականին: Հետևաբար այն պիտի որ գոհացներ նոր հասարակարգ կառուցողներին:

Այնուամենայնիվ, 1920-30-ականների պետական շրջանակներում այդ տոնի նկատմամբ վերաբերմունքն ընդհանուր առմամբ բացասական էր, ինչը շատ հստակ ձևակերպված էր պաշտոնական տեսակետներում. «Հունվարի 1-ի տոնը աշխատավոր ժողովրդի համար ոչ մի նշանակություն չունի, նախ՝ այդ տոնը կապված է քրիստոնեական օրացույցի հետ, որը մենք չենք ընդունում: Երկրորդ՝ այդ տոնը ոչինչ չի ասում պրոլետարիատի մտքին ու զգացմունքին, երբ նա գիտի, որ այդ օրը պատկանում է բուրժույին, հարուստին, երբ նա փակում է անցած գնացած տարվա հաշիվները իր բոլոր շահագործումների ու կեղեքումների և պատրաստություններ է տեսնում նոր տարվանից, նոր եռանդով ու թափով սկսելու իր շահագործումներն ու կեղեքումները: Պրոլետարական աշխարհը պետք է ունենա իր սահմանած նոր տարին, իր տարեմուտի տոնը, որ կապված լինի հեղափոխության պատմության ամենանշանավոր մոմենտի հետ»[2]:

---

[1] Հրաման (95) Տոների մասին, ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 69-70:

[2] **Նիմանդ,** Նոր տարի, Մաճկալ, Երևան, 1928, 1 հունվարի:

Նոր տարուն պետական կարգավիճակ տալով՝ իշխանությունները նպատակ ունեին հիմնականում ակումբներում կազմակերպվող հասարակական-քաղաքական միջոցառումներով (հեղափոխական թեմաներով զեկուցումներ, դասախոսություններ, գրական-երաժշտական երեկոներ և այլն) կենցաղից դուրս մղել ժողովրդական ավանդույթները:[1]

Ամանորի այդ նոր միջոցառումները ժամանակի ընթացքում տարածում գտան արտադրական և ուսումնական հաստատություններում: Սակայն, աստիճանաբար կորցնելով հակակրոնական և հեղափոխական հատկանիշները՝ դրանք վերածվեցին աշխատանքային կոլեկտիվների յուրատեսակ հաշվետվությունների:

Չնայած մերժողական քաղաքականությանը, տոնի ավանդական որոշ տարրեր կենցաղում շարունակում էին գոյատևել:

Պահպանվել էին շնորհավորական փոխայցելությունները՝ առաջնությունը տալով ազգականներին (այդ թվում՝ քավորին, կնքահորը), նոր հանգուցյալներ ունեցող մերձավորներին, ինչպես նաև իշխանության ներկայացուցիչներին: Այս առումով շատ ուշագրավ էր խորհրդային ղեկավարին («գլավնիին») առաջինը շնորհավորելու երևույթը:[2] Հիմնականում այցելում էին տղամարդիկ, որոնք իրենց հետ վերցնում էին խմիչք և մրգեր: Շնորհավորական այցերը հիմնականում սկսում էին տոնի հաջորդ օրը՝ առավոտյան:

Փոխայցելությունները գիշերվա ընթացքում մասնակի բնույթ ունեին: Ամանորի գիշերը հազվադեպ էին գնում գերեզմաններ՝ նախապատվությունը տալով հանգուցյալների հարազատների տներին:

Ամանորյա ծիսական ուտեստում գերակայում էին պահքի կերակուրները (պասուց տոլմա, ձուկ, ձեթով ուտեստներ և այլն):

Տոնի նախօրյակին մաքրում էին տները, հարթում հին վեճերը՝ Նոր տարին հաջող, անխռով դիմավորելու ակնկալիքով:

Ինչ վերաբերում է տոնածառին, ապա գյուղերում այն հազվադեպ երևույթ էր: Ամանորին եղևնի զարդարելու ավանդույթը մեծ մասամբ կենցաղ մտավ հետպատերազմյան փուլում:

---

[1] **Ա. Միրզայան**, Նոր տարին երկրային գնդում, Մաճկալ, Երևան, 1925, 18 հունվարի, էջ 8:

[2] **Ս. Մկրտչյան,** ԴԱՆ (դաշտային ազգագրական նյութ), Հնաբերդ, 1986, էջ 62: ԴԱՆ, Գեղադիր, 1986, էջ 54: ԴԱՆ, Բջնի, 1987, էջ 22-25: ԴԱՆ, Արզական, 1987, էջ 27-30: ԴԱՆ, Լեռնուտ, 1987, էջ 43: ԴԱՆ, Քաղսի, 1987, էջ 75-77:

Սկզբնական շրջանում քննադատվում էր նույնիսկ եղևնի զարդարելը, որը բացատրվում էր Քրիստոսի Ծննդյան տոնի հետ խորհրդաբանորեն կապված լինելու հանգամանքով:[1] Այդ արգելքը ժամանակի ընթացքում հանվեց, և տոնածառն աստիճանաբար ամրապնդվեց Ամանորի պետական և կենցաղային ծիսահամալիրում:

Խորհրդային Ամանորն արտահայտվեց բոլշևիկյան «պոեզիայում», ուր մեծ մասամբ գովերգվում, մեծարվում էր սոցիալիստական պետությունն իր հեղափոխական մեծ առաջնորդներով: Դժվար թե պատմության մեջ եղած լինեն հին ու նոր աստվածներին նվիրված այնպիսի փառաբանություններ, ինչպիսին ստեղծվեցին այդ տարիներին, ձոնված լինելով նոր՝ «բոլշևիկյան աստվածներին»: Նոր տարվա կապակցությամբ հեղափոխական առաջնորդներին ուղղված ամանորյա մաղթանքներում արդեն իսկ նշմարվում էին «նոր պաշտամունքի» որոշակի տարրեր՝ առաջնորդի նկատմամբ «կույր հավատ, սեր, վախ, սիրաշահում, փառաբանում», այսինքն այն, ինչում բոլշևիկ գաղափարախոսները մեղադրում էին իրենց «ընդդիմախոս» հավատացյալներին: Այս որակները խորհրդային պոեզիայում արտացոլված են ընդհուպ 1950-ականները[2]:

Ամանորի գաղափարն այդ նոր ստեղծագործություններում միախառնված էր նոր կյանքի, նոր հասարակարգի ներկայի ու ապագայի փառաբանման հետ, իսկ մեծ առաջնորդները (հիմնականում՝ Լենին և Ստալին) համեմատվում էին այն արեգակի հետ, որին հազարամյակներ առաջ առնչվել են հին աստվածները, իսկ քրիստոնեության օրոք՝ «Առավոտ լուսոյ, արեգակն արդար Հիսուս Քրիստոսը»:

---

[1] Ի՞նչ պետք է անենք հակածննդյան կամպանիային, Անաստված, Երևան, 1929, 11-12, էջ 12:

[2] **Մկրտիչ Կորյուն**, Խնդության տոնածառ - Նոր տարվա նվեր, Երևան, 1938, էջ 18: **Սարմեն,** Մարդկության բախտի ջահը մեր ձեռքին, Սովետական Հայաստան, Երևան, 1947, 1 հունվարի, էջ 3: **Համո Սահյան**, Շնորհավոր Նոր տարի, Սովետական Հայաստան, Երևան, 1947, 1 հունվարի, էջ 4: **Բաբկեն Կարապետյան**, Շնորհավոր Նոր տարին, Սովետական Հայաստան, Երևան, 1947, 1 հունվարի, էջ 3: **Հովհաննես Շիրազ,** Շնորհավոր Նոր տարի, Սովետական Հայաստան, Երևան, 1949, 1 հունվարի, էջ 2: **Գուրգեն Բորյան,** Երգ Նոր տարվա, Սովետական Հայաստան, Երևան, 1951, 1 հունվարի, էջ 1:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ - ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՊՈԵԶԻԱ

ՆՈՐ ՏԱՐԻ -ԱՄԱՆՈՐ

...Բարձրացնենք քեզ հետ ընկեր, բաժակդ Նոր տարվա
Բարձրացրեք բաժակը բոլորդ, մարդիկ ազնիվ,
Հանուն Ստալինի, հանուն սիրո, խաղաղության,
Հանուն գալիքի մեր ոսկեշող կոմունիզմի:[1]

...Շնորհավոր Նոր տարի, ո՛վ արեգակ լուսահորդ
Բուժվող, ծաղկող, բարձրացող Հայրենիքի վրա վառ.
Շնորհավոր Նոր տարի, մեր սիրելի առաջնորդ,
Դու մեր դարը հավերժող, անզուգական զորավար:[2]

Մեր մեծ Ստալինը հարազատ
Պարգևեց մեզ նոր կյանք ազատ,
Կյանքն ուրախ է, կյանքը պայծառ
Հեյ ջան, խնդության տոնածառ:
Մեր ուրախ երգն է զիլ հնչում
Առվակի պես միշտ կարկաչում,
Ստալինյան արևով դու վառ
Հեյ ջան, խնդության տոնածառ[3]:

...Միլիոնների հետ քեզ հրաժեշտ է տալիս
Առաջնորդը՝ ձեռքին ծխամորճն իր ծանոթ,
Մնաս բարով, կյանքով, փառքով անցած տարի
Ողջույն քեզ Նոր տարվա լույս առավոտ:[4]

...Շնորհավոր Նոր տարի
Երկրիս երթին ընդհանուր,

---

[1] **Գ. Բորյան,** Երգ Նոր տարվա, Սովետական Հայաստան, Երևան, 1 հունվարի, 1951, էջ 1:

[2] **Բ. Կարապետյան**, Շնորհավոր Նոր տարի, Սովետական Հայաստան, Երևան, 1 հունվարի, 1947, էջ 3:

[3] **Մ. Կորյուն**, Խնդության տոնածառ, Երևան, 1938, էջ 18:

[4] **Հ. Հովհաննիսյան**, Խոսք անցնող տարուն, Սովետական Հայաստան, Երևան, 1 հունվարի, 1953, էջ 2:

Հնգամյակին վիթխարի
Դյուցազներին անձնանուր:

...Շնորհավոր Նոր տարի
Ժողովրդին մեր խնդուն,
Մեր բանակին քաջարի,
Առաջնորդին իմաստուն:

Խմենք կենացն իմ երկրի,
Առաջնորդի մեր անմահ,
Թող նա ապրի աշխարհում,
Որքան երկրում արև կա,
Որքան աշխարհն է ապրում:[1]

ՆՈՐ ՏԱՐԻ - ԱՄԱՆՈՐ
(ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ)

Սամվել Մկրտչյան

Բանալի բառեր *- Նոր տարի, Ամանոր, տոն, տոնացույց, ավանդական, խորհրդային, հավատալիք, պետական, կենցաղ, փոխայցելություն, ծես, ուտեստ, տոնածառ, եղևնի, հալածանք*

Նոր տարին թերևս միակն էր ավանդական տոներից, որը համեմատաբար քիչ հալածվեց բոլշևիկյան իշխանությունների կողմից: Այն եզակի տոներից էր, որ առաջին իսկ դեկրետով մուտք գործեց հայոց խորհրդային պետական տոնացույց: Այնուամենայնիվ, 1920-1930-ականների պետական շրջանակներում այդ տոնի նկատմամբ վերաբերմունքն ընդհանուր առմամբ բացասական էր:

Նոր տարուն պետական կարգավիճակ տալով՝ իշխանությունները նպատակ ունեին հիմնականում ակումբներում կազմակերպվող հասարակական-քաղաքական միջոցառումներով (հեղափոխական թեմաներով զեկուցումներ, դասախոսություններ, գրական-երաժշտական երեկոներ և այլն) կենցաղից դուրս մղել ժողովրդական ավանդույթները:

Չնայած մերժողական քաղաքականությանը, տոնի ավանդական որոշ տարրեր կենցաղում շարունակում էին գոյատևել:

---

[1] **Հ. Շիրազ,** Շնորհավոր Նոր տարի, Սովետական Հայաստան, Երևան, 1 հունվարի, 1949, էջ 2:

НОВЫЙ ГОД - АМАНОР
(ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА)

Самвел Мкртчян

Ключевные слова *- Новый Год, праздник, календарь, традиционный, советский, верование, государственный, быт, взаимопосещение, ритуал, пища, новогодняя ёлка, ель, преследование*

Новый год, пожалуй, является единственным традиционным праздником, который стал сравнительно поздно преследоваться со стороны большевиков. Это редкий случай, когда традиционный праздник был включен в список государственных праздников. Тем не менее, в 1920-30-ых гг. отношение к празднику в основном было отрицательным, и это было четко выражено в официальной точке зрения.

Придавая Новому году статус государственного праздника, правительство преследовало единственную цель – вытравить народные традиции из цикла социально-политических официальных мероприятий, таких как лектории на революционные темы, обсуждения, литературно-музыкальные вечера и т. д.

Несмотря на отрицательное отношение, в праздничном комплексе сохранились некоторые традиционные черты. Поздравительные визиты, особенно к родственникам и к людям, недавно потерявшим родных, а также к представителям властей, сохранились.

В обрядовой еде преимущество отдавалось постной пище. Перед праздником убирали дома, решали старые споры, чтобы встретить Новый год в счастье и мире. В то время новогоднее дерево было редкостью, оно вошло в быт только в послевоенные годы.

Новый год нашел своеобразное выражение также в большевистской “поэзии”, где воспевалось социалистическое государство и его лидеры.

NEW YEAR – AMANOR
(THE PERIOD OF BOLSHEVISM)

Samvel Mkrtchyan

Keywords: *New Year, holiday, calendar, traditional, Soviet, belief, state, the everyday, reciprocal visiting, ritual, meal, Christmas tree, fir-tree, persecution*

The New Year actually is the only traditional festival lightly and comparably late persecuted by Bolsheviks. This is a rare festival included in the list of the Armenian

state festivals. Nevertheless, in the 1920-30ies approach toward the festival was in general negative, and that is exactly expressed in the official viewpoint.

Giving a state status to the New Year officials aimed at exiling folk traditions from the social-political events such as lectures on revolution topics, meetings, literature-music concerts etc.

Despite the denying approach, some traditional traits of the festivals are still alive. Visits of congratulations, first of all concerning relatives, people with fresh grief, representatives of administration etc, have preserved.

In the ritual meal dishes of Lent period prevail. Before the festival people clean their houses, regulate old arguments to start the year with luck and peace. The New-Year tree was at that time a rarity, only after the World War II the tradition of furnishing a tree entered the festival complex.

The New Year found a special expression in the Bolshevik “poetry”, where the socialist state was glorified with its leaders.